նալ իւր գերդաստանի մօտ, որ ստիպուեց, առանց քահանայի, Բագիրից գնալ փախստականների հետ դեգերելու օտարութեան և մուրացկանութեան մէջ Շամշադինու և Ղազախի հայ գիւղերում...

Թափառական բադացիների համար այսպիսով ստեղծուեց և մի նոր ժամանակաւոր բնակավայր՝ Քեշիշքեանդ գիւղում՝ Ալահեար բէգի տնօրէնութեան ներքոյ: Այս պատահական բան չէր, այլ նպատակաւոր: Այդ բնակավայրը ստեղծեց ինքը Ալահեար բէգ Զիւլգադարովը մի կողմից՝ հայերին պատսպարելով Թուրքերի յարձակումներից և միւս կողմից՝ իւր անձնական ապահովութեան համար, ըստ որում Զարդախլու գիւղի հայերը Բադայի աւերման վրէժը առնելու համար սպառնում էին յարձակուել և աւերել Քեշիշքեանդը՝ հասցնելով նրա բնակիչներին բադացիների ներկայ վիճակին...

Կր շարունակուի Քաջբերունի.



ԻՄ ՎԻՃԱԿԸ

Երկինքն ամպել է. թանձր, ահարկու
Մշուշը ծածկել իմ անձուկ ճամբան:
Բախտի անողոք անիւը հուժկու
Դարձրել չորս կողմս ամայի խոպան:

Նայում եմ երկար, որ գտնեմ ճամբաս,
Հանեմ փափագած ցանկալի կէտին.
Ցասկոտ մրրիկն է ծիծաղում վրաս
Եւ ինձ ուշաթափ, շպրտում գետնին:

Ներսէս Ռոստունի